



891.99

4-30

15035

Արքային Ազգային

ՀՊԴ.

458









891.99
JL-30

030594007 L 1001 R



Հայոց Ազգական
առաջնախորհրդի ժողովը

A 6078

ՀԱՅ





1955.05.10

1955.05.10

A 6078





ԳԱՐՈՒՆ ՀԱՅԻ ԿԱՐ,



Ե մարդ կալից
գրաստով գարի յեր
կըում տուն Յեզ
բուռակը մոր հետ
զնում եր և հետ
դառնում իսկ տա-
նը, ուր կըում եյին
գարին, մի խող կար

կապած, վորին գիրացնում եյին: Յել գարին
անպակաս եր նրանից, վորպեսզի ուտի և գի-
րանաւ: Յեզ քուռակն ասաց մորը. «Ինչժև հա-
մար այն խոզն առանց աշխատանքի ուտում ե
գարին, վոր մենք կըում ենք մեծ դժվարությամբ»

և մեզ, վոր շարչարվում ենք, որը մի անգամ են
գարի տալիս»։ Մայրն ասաց. «Լսիր, վորդյակ և
մի շաբաթ ևս համբերիր և ապա յես քեզ պա-
տասխան կտամ և քո աչքով կը տեսնես»։

Յեվ մի շաբաթ հետո եջը և քուռակը բեռով
տուն եյին գալիս. քուռակը մորից առաջ եր
գնում և լսեց խռնչոցի ահագին ձայն, վորովհե-
տեւ խոզը մորթում եյին. Յեվ խրտնեց քուռակը
և հետ փախավ դեպի մայրը և մայրն ասաց.
«Ի՞նչ յեղավ քեզ, վորդյակ, վոր սոսկում ես. մի
վախենար խոզից, վորովհետեւ նրանից գարու հա-
շիմն են ուզում»։

Յեվ դարձյալ յեկան կալը՝ գարի կրելու. Յեվ
յերբ բարձած վերադարձան տուն, քուռակը բարձ-
րացնելով վոտքի սմբակը, մորն ասաց. «Ո՞վ մայր,
տես թե վոտքիս չի՞ փակչել գարու մի հատ, վոր
ինձնից ել հաջիվ ուզեն, ինչպես խոզից»։

ԱՅՐԻ ԿԻՆ ՅԵՎ ՎՈՐԴԻ



Ի այլի կին ուներ
տասը այծ և մի
վորդին Յեվ ամեն
որ վորդին այծերը
տանում եր արոտ և
մայրն ամեն որ մի
շերեփ ջուր եր
լցնում կաթի մեջ և
փոխ եր տալիս հա-
րևաններին Յեվ վորդին մորն ասաց, թի ինչու
յես այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս
հարևաններին. Մայրն ասաց. «Վորդի, մեր կաթը
քիչ ե, նրա համար եմ անում, վոր մեր կաթը

մի քիչ ավելի լինի, վոր ձմեռը մեզ թացան
լինի»:

Իսկ մի որ, յերբ վորդին այծերն արոտ եր
տարել, յերկնքում ծնվեց մի փոքր ամպ՝ և անձ-
րկ յեկավ և հեղեղ յեղավ և այծերը սրբեց լցրեց
գետը։ Վորդին տուն յեկավ արևով և դատարկ և
ձեռքին միայն փայտը։ Մայրն ասաց. «Վորդի,
մւր են այծերը և ինչու դու այսոր արևով յեկար»։
Վորդին ասաց. «Մայրիկ, այն մի շերեփ ջուրը,
վոր խառնում եյիր կաթին և փոխ տալիս հարե-
վաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և յեկավ
մեր այծերը տարավ, լցրեց գետը»։

ՄԻԱՅՆԱԿՅԱԳ ՅԵՎ ԳԱՄԲՈՒ ՇՈՒՆ



Ե միայնակյաց քնակ-
վում եր մի գյուղի
մոտ և զյուղում նա
սիրեց մի ազգիկ և բա-
զում ժամանակ նրա
հետ շնանում եր
պոռնկությամբ։ Յեղ
դյուղի տանուաերն
ուներ մի գամբռ շուն,

վոր խիստ պահող շուն եր և ամբողջ գյուղը պա-
հում եր։ Մի զիշեր միայնակյացն յեկավ, վոր
շնանա այն կնոջ հետ և դյուղի յեղբին նրան
հանդիպեց տանուաերի շունը և գամբռեց նրա
վրա և նրան կծեց և արյունը ճապաղ արեց և

Նաև վերքեր արեց և նեղելով նրան քշեց, Յեկ
միայնակյացը լալով և արյունաթաթախ մտավ
խուցը և գուռը փակեց, զղջաց և չոքեց աղոթ-
քի, լաց յեղավ և կուրծքը ծեծելով ասաց. «Աստ-
ված, բազում ժամանակ ե, վոր չնացա և չվա-
խեցա քո դատաստանից և վոչ դառն դժոխվից
դարհուրեցի, բայց այս դիմեր զորհուրեցի մի
գամբո չնից և չկարողացա շնություն անել»:

Ա. ՅԱՆԻ ՑԵՎ. Գ. Ա. ՅԱՆԻ



Ա. ՅԱՆԻ ՑԵՎ. Գ. Ա. ՅԱՆԻ
միասին և պատղամ
ուղարկեցին գայլերի
ազգին և ասացին, թե
ինչու մեր մեջ լինի
անհաշտխոռվություն,
այլ վոչ թե խաղա-
ղություն։ Յեզ հա-
վաքվեցին գայլերը և
ուրախացան մեծ ու-
րախությամբ և նա-
մակով պատղամ ու-
ղարկեցին այժերի ազգին, նաև անթիվ ընծա-
ներ։ Յեզ գրեցին այժերին. «Լսեցինք ձեր
բարի խորհուրդը և զոհանամք աստծուց, վորով-
հանե մեզ համար մեծ խնդություն և և խաղա-
ղություն։ Նաև իմացնում ենք ձերդ իմաստու-

թյան, վոր հովիվսու շներն են պատճառ և
սկիզբ մեր խռովության և կռվի. և յեթե նրանց
վերացնեք մեջտեղից, շուտով լինի խաղաղու-
թյուն։ Յեվ այս լսեցին այծերը, հաստատեցին
և ասացին. «Իրավացի յեն գայլերը, վոր մեզ
սպանում են, վորովհետև շները և հովիվը նրանց
հալածում են մեզնից»։ Յեվ այծերը վուարեցին
շներին և հովին և լերդվեցին, վոր հարյուր տա-
րի մնան անխախտելի սիրով։ Յեվ այծերը
ցըվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ
լինել և ցնծալ և խաղալ, վորովհետև պրածում
եյին լավ արոտներում, ուստում եյին համեղ
խոտեր, խմում եցին պաղ ջրեր և խնդում եյին
և վազվզում եյին, փառք տալով, վոր հասան բարի
ժամանակի։

Յեվ գայլերը համբերեցին հարյուր որ, ապա
հավաքվեցին դաս-դաս, ընկան այծերի վրա և
կերան։

և չասա հավանեց: Իսկ մյուսը բնակ վոչինչ չեր
նկարել. Նա պատը շատ գեղեցիկ սարքել եր և
կոկել հայելուց ավելի լավ: Յերբ թագավորը տե-
սավ, վոր չեր նկարել, այլ միայն կոկել եր,
զարմացավ և ասաց. «Դու ի՞նչ ես արել»: Նա
ասաց. «Յես ցույց կտամ իմ գործը»: Յեկ ապա
վեր քաշեց միջի վարագույրը և յերբ լույսը ծա-
գեց և լուսավորեց կոկած պատը, այն ժամանակ
մթնեց նկարագարդ պատը, վորովհետեւ հայե-
լու մեջ յերևում եյին այն բոլոր պատկեր-
ները, վոր նկարված եյին մյուս պատի վրա: Յեկ
թագավորն ասաց. «Այս մյուսից գեղեցիկ ե»:

ԻՄԱՍՈՒՆ ԴԱՏԱՎՈՐ



Ի մարդ ունել
չար կին և կինը
կռվեց նրա հետ
և ասաց. «Կար-
ծում ես թե քո
յերեք վորդինե-
րը քեզնի՞ց են.
Մեկն ե քեզնից,
իսկ յերկուսը».

բին են»: Յեզ նա հարցրեց, թե վարն ե իմը և
կինը չասաց: Յեզ յերբ հայրը մեռնում եր, ասաց.
«Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ վոր-
դուն»: Յեզ յեղբայրները կռվում ելին իրար
հետ. մեկն ասում եր, թե յես եմ հարազատ

վորդին և մյուսը՝ թե յես եմ, Յեվ դնացին մի խմատուն դատավորի մոտ։ Յեվ դատավորը հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից և նետ արձակել նրա վրա։ Ով հորը զարկեր նետով և նետը ծակեր հոր մարմինը, նա յեր հարազատ վորդին։ Յեվ յերկու վորդիները զարկեցին հորը, իսկ ճշմարիտ վորդին դանակը քաշեց, վոր սպանի յեղբայրներին և լաց յեղավ դառն արտասուրով և թաղեց հոր մարմինը։

Յեզ իմացան, վոր նա յեր հարազատ վորդին
և նրան ամիսն հայրենի կայքը:

ԱՌՅՈՒՆ ՅԵՎ. ԳԱՅԼ. ՅԵՎ. Ա.Դ.Ա.ՅՈ



Ո-ՅՈՒՆՆ և գայլն և
աղվեսն յեղբայր
յեղան և վորսի յե-
լան և գտան մի խոյ,
մի վոչխար, վոր և
մաքի և մի գառ:
Ճաշի ժամին առ-
յուծն ասաց գայ-
լին, թե բաժանիլ:

մեր մեջ այդ վորսը, Յեվ գայլն ասաց. «Ո՞վ թա-
դավոր, աստված արդեն բաժանել ե՞» խոյը քեզ,
մաքին ինձ և դաւն աղվեսին». Յեվ³ առյուծը
բարկանալով, ապատակ զարկեց գայլի ծնոտին՝ և
դուրս թռան գայլի աչքերը և նա նստեց և դառն

լաց յեղաղի։ Յեվ դարձյալ ասաց առյուծն աղվեսին, թե բաժանիր վոչխարները մեր մեջ։ Յեվ աղվեսն ասաց, «Ո՞վ թագավոր, աստված արդեն բաժանել ե՝ խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին և գառը քեզ՝ ընթրիքին»։ Յեվ առյուծն ասաց, «Ո՞վ խորամանկ աղվես, քեզ ով սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել»

Յեվ աղվեսն ասաց. «Ինձ սովորեցրին գայլի աչքերը, վոր դուքս թուան»։

Գ Ի Ն Ի



Ի թագավոր մի
վորդի ուներ և
հրաման արսց նա-
յիպներին, թե ա-
մեն որ ձեզնից մե-
կը թող տանի իմ
վորդուն և պատվի:
Յեվ տանում եյին:

Յեվ մի որ մի նայիպ պատվելու յեր տարել թա-
գավորի վորդուն և յերեկոյան նրան տարավ
թագավորի տունը և ինը գնաց: Թագավորի
վորդին խիստ գինով եր և հարբած դուրս յեկավ,
ընկավ աղբանոցը և մեռավ: Յեվ թագավորը

հրամայեց, թե իմ իշխանության ներքո ինչքան
այդի կա՝ փակեք և կարասները կոտրատեք: Յեվ
այդպես արին:

Յեվ մի այրի կին մի վորդի ուներ և այրի
կինը պահեց յուր հնձանը և դինին և ամեն ա-
ռավուու և յերեկո հացի վրա յերկու թաս գինի
յեր տալիս վորդունու Յեվ այրի կնոջ վորդին մի
գիշեր զուրս յեկավ, սպանեց թագավորի առյու-
ծին և թագավորն առավոտյան հրամայեց, թե
ով վոր սպանել և իմ առյուծին, յեթե զա և ինձ
պատմի՝ նրան չեմ պատժի: Յեվ յեկան այրի
կինը և նրա վորդին: Թագավորը նրան հարցըց,
թե ինչպես սպանեցիր առյուծին: Յեվ նու ասաց,
թե գիշերով զուրս յեկա, հանգիպեցի առյուծին
և սպանեցի: Յեվ մայրն ասաց, թե նրան գինով
և մնուցել և պատմեց, թե ինչպես ե գինով մնու-
ցել:

Յեվ թագավորը հրաման արձակեց, թե այգի
տնկեք և գինին այնպես խմեք, վոր առյուծ
սպանեք և վոչ թե ազբանոցում մեռնեք:


ԻՄԱՍՏՈՒՆ ԱՎԱԴ ԵՇ



Ա.Տ եշեր գնում եյին արքունի
գործով և նրանց մեջ կար մի
ավագ եշ՝ իմաստուն և մեծ, քան
մյուսները։ Յեկ ամենքը նրան
պատվում եյին, վոր-
պես հայր և առաջ-
նորդ։ Յեկ ահա բարձ-
րանում եյիմ մի սար
և նա խառնչեց և գոռաց սաստիկ ահագին և
հետեվի կողմից մեծամեծ ճայթյուն արձակեց։
Յեկան մյուս եշերը և ասացին. «Ո՞վ պատվական
հայր, քո առջեվի ճայնից բոլորս ունենք, իսկ
ինչ եր այն ահագին ճայթունը, վոր քո հետեվի
կողմից յելավ. աղաչում ենք, ասա մեզ»։

Յեզ նա առաջ. «Ո՞վ իմ վորդիներ, ձեր առաջ սուս չեմ յերգվի և ճշմարիտ կասեմ, վոր առջելի ձայնի դորությունից բնավ չեմ կարող իմանալ, թե ուրիշ ինչ ճայթյուն և յելնում իմ հետեւիլի կողմից»:

ՄԻԱՄԻՏ ԳՈՂԵՐ



ԵՐԿՈՒ գող բարձրացան մի մեծատան կտուր և կամեցան յերդով վայր իջնել և գողություն անել Յելլ լուսնկա յեր, Յելլ մեծատուն մարդըն իմացալ, վոր գողերը յեր-

դիկի մոտ են, Յեվ կինը մարդուն ասաց, թէ այս ամեն գանձերը և վոսկին և կերպասը քեզ վժրտեղից են, Յեվ մեծատուն մարդն ասաց. «Գնում եյի գողության, մեծատուն մարդկանց յերդիկով. իջնում եյի և լուսնկա յեր, ինչալես

այժմ և լուսնի շողերը յերդիկից ներս եյին ընկնում, ինչպես այժմ և յես դրկում եյի շողերի սյունը և վայր եյի իջնում և այնպիսի մի բան եյի տառմ, վոր ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, յերեվում եր ինձ և կապում եյի լուսնի շողերին և վեր բարձրանում, Յեվ այս ամենն այդպես հմ վաստակել:

Եերբ գողերն այդ բանը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ բանին և լուսնի շողերը գրկելով յերդից վայր ընկան և զարդվեցին:

Յ Ե Ղ Ե Գ Ի Ն Յ Ե Վ Ա Ռ Ա Ւ Ե Մ



Ի թագավոր զբոսանքի յելավ շըջելու լեռներում և հովիտներում։ Յեվ տեսավ, վորմեծամեծ ծառեր կային՝ կոտրատված և փշրված և միայն մի յեղեգ կար՝ կանգուն անարատ։ Յեվ թագավորն ասաց. «Ո՞վ յեղեգ, ասա ինձ, թե ինչպես հաստատուն ես մեացել յերբ մեծամեծ ծառերը փշրվել են»։ Յեվ յեղեգն ասաց. «Ո՞վ թագավոր, յերբ սաստիկ հողմը բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ կանգնեցին հողմի դեմ և հողմը նրանց փշրեց. իսկ յես խոնարհվեցի հողմի կամքով և ահա կանգուն եմ»։

ԻՇԽԱՆ, ՅԵՎ. ԱՅՐԻ ԿԻՆ



Ե իշխան կար խիստ
չար և անիրավ։ Յեվ
նույն քաղաքում ապ-
րում եր մի այրի
կին և իշխանը ինարկ
պահանջելով նեղում
եր նրան և այրի կինն
աղոթում եր, վոր իշ-
խանն ունենա խաղաղ
և յերկար կյանք։

Դնացին, ասացին իշխանին, թե քո չարության
համար աղօթում ե այրին։ Յեվ իշխանը յեկավ և
ասաց. «Յես քեզ բարիք չեմ արել, ով կին, դու
ինձ համար ինչու յես աղօթում»։

Այլի կինն ասաց. «Թո հայրը վատ մարդ եղ.
յես անխծեցի և նա մեռավ. Դու նստեցիր նրա
տեղը՝ ավելի խիստ չար. Յեզ այժմ վախենում
եմ, վոր մեռնես և քո վորդին քեզնից ավելի չար
լինի»:

Ի ՄԱՍԱԿԻՆ ԶԻՆԱՅԻՐ



Ի վոմի իմաստուն զինվոր պատերազմ երդնում և նա յերկու վոտքով կաղեր: Յեվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ո՞վ վողորմելի, ուր

ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, վորովհետեւ փախչել չես կարող»: Յեվ նա ասաց. «Ո՞վ անմիտ, յես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու և կռվելու և հաղթելու»:



ԱՐ մի թագավոր և
ուներ նա մի սի-
րելի ոձ, վոր նրան
ամեն որ բերում եր
մի կարմիր դահե-
կան, Յեվ թագա-
վորն ունեցավ մի
մանուկ, վորին
սնուցում եր զահի
վրա և ոձը նետում
եր մանկան պարա-
նոցով և այդական
խաղում եյին ոձն ու մանուկը, Յեվ յերբ մա-
նուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ
սուրը հանեց և կտրեց ոձի պոչը և գետին գցեց:
Յեվ զայրացավ ոձը, թույնով զարկեց մանուկին:

և մանուկն իսկույն մեռավ և ոձը դնաց ոտար
յիրելիր։ Յեվ յերբ թագավորն յեկավ և մանու-
կին ոձի թույնից սեվացած և մեռած տեսավ և
ոձի պոչը գետնին ընկած, իմացավ, վոր յուր
մանուկն և թրով կտրել ոձի պոչը։ Յեվ սգաց
վորդուն, տարավ թաղեց գերեզմանում։

Յեվ անցավ մի առ ժամանակ և թագավորը
խնդրակներ ուղարկեց այն ոձի մոտ և ասաց.
«Դիմեմ, վոր առաջ իմ վորդին և ծոռւթյուն ա-
րել. նա կտրել և քո պոչը, ապա դու կծել ես
նրան։ Ինչ վոր յեղավ՝ յեղավ և իզուր գնացիր։
Արի և մենք կլինենք առաջվա նման իրար սի-
րելի և միասին կապրենք։ Իսկ ոձը պատասխան
տվեց և ասաց. «Այդպես չե. քանի վոր յես ովհ-
տի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո վորդու
գերեզմանին, ուրեմն մեր միջից թշնամությունը
չի փերանաւ լավն այն ե, վոր դու և յես իրարից
հեռանանք, վորպեսզի այլ ուրիշ մեծագույն
չարիք չծնվի մեր միջ։»

Առ ՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՎԵՍ ՅԵՎ ԱՐԶ




ՈՅՈՒՆԻՇՆ հիվանդացավ և ամեն կենդանիները յեկան նրան տեսության միայն աղվեսն ուշացավ։ Արջը չարախոսեց նրան և աղվեսը դռնամուտից լսեց և ներս ընկնելով թափալիեց առ յուծի

առաջ։ Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի շեկաը գարջելի. ասա ինձ, ինչո՞ւ ուզացար»։ Աղվեսն ասաց. «Մի բարկանար, բարի թափավոր, յերդվում եմ քո գլխով, վոր քո առողջության համար այցելեցի շատ բժշկապետների և մեծ չար-

չարանք քաշեցի, բայց իմացա գեղը քո բժշկությանց։ Յեվ առյուծն ասաց. «Բարի յեկար, իմաստուն կենդանի, ինչն ե այդ գեղը։ Աղվեսն ասաց. «Եթևտ պիտանի յե և դյուրին. բժշկապետներն ասացին, թե կենդանի հանեք արջի մորթին և տաք տաք քցեք առյուծի վրա և իսկույն մորթին ցավը կհանի հիվանդից։ Յեվ առյուծը հրամայեց. արջին բռնեցին և սկսեցին հանել մորթին։ Իսկ նա վայում եր և արձակում մեծամեծ վոռնոց։

Յեվ աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան, ով արքունիք մտնելով կչարախոսի մեկին։

ԿԱՐ ՄԵՂՈՒ ՊԱՏՃԱՌԻ ՊԱՍԵՐԱԶՄԻ



Ե մարդ խանութ
ուներ և մեղք եր
ծախում և մեղքից
մի կաթ կաթեց
գետնին և մի պի-
ծակ նստեց կաթի
վրա և կատուն
վաղեց և պիծակին
առավ և նրանից

հետո զունը վաղեց և կատվին առավ և խանութի
տերը շանը դարձեց և սպանեցր Յեկ այն գյու-
ղին դրասի մի գյուղ կար և զունն այդ գյուղից
եր: Յերբ շան տերն իմացավ, թե խանութպանն

սողաննել և յուր չանը, այն ժամանակ յեկավ և
սողաննեց խանութպանին Հետո յերկու կողմից
վեր կացան զյուղացիք և միմյանց հետ մեծ
պատերազմ արին և նրանց միջև կռուբած յե-
ղավ և յերկու կողմից կենդանի մնաց մի մարդ՝
մի կաթ մեղքի համար:

Կ ՏԱԿ ՎՈՍՆ ԳԱՆԶԻ




Ի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծույլ վորդիներ։ Մահվան ժամկին նա կանչեց վորդիներին և ասաց. «Ի՞վ գավակներ, իմ նախնիները շատ գանձ

են թաղել մեր այգում և յես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը։ Այդ գանձը կպտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի։ Յեվ հոր մահից հետո վորդիներն սկսեցին աշխատել մեծ յեռանդով և խռագույն եցին վարում, վորովհետեւ յուրաքան-

Հյուրն աշխատում եր, վոր ի՞նքը գտնի զանձը,
Յեվ այդին սկսեց աճել և զորանալ և առատ
բերք տվեց և նրանց հարստացրեց զանձերով:

ՈՒՂԱ ՅԵՎ. ԴԱՅԼ. ՅԵՎ. ԱՂԱՅՈ



ԽՂՏԸ և
ԳԱՅԱՐ և
ԱՂՎԵՆՅ
ՅԵՂԲԱՅՐ
ԽԵՂԱՆ և
ՃԱՀԱ-

պարհ ընկան և ճանապարհին դտան մի բլիլ
հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող
նա ուտիւ Յեվ սկսեցին առել իրենց տարիքը։
Աղվենն ասաց. «Յես այն աղվենն եմ, վորի ա-
նունը Աղամը դրեց»։ Գայլն ասաց. «Յես այն

դայլն եմ, վորին նոյը տապահնն առավաւ։ Յեկ
ուղար տեսնելով, վոր նրանք իրենից ավագ
դուրս յեկան և հացը պիտի առնեն, հացը բե-
րանն առաջ և բարձրացնելով ասաց. «Միթե յես
յերեկվա տղան եմ, վոր այսչափ մեծացրել եմ
իմ սրունքները»։

Յեկ սկսեց հացն ուտելու իսկ ազգեսը և գայլը
ցատկելով նրա շուրջը, վոչինչ չկարողացան ա-
նել և փախան։

ԿՐՈՒՆԿ ԹԱԳԱՎՈՐ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԵՆ



ԱՎԱԲԱՔԱԾԻՆ Թռչունները և ասացին, թե վորի ձայնը զորավոր է, նրան մեղ թադավոր դնենք, վորպեսզի պատերազմի ժամին կանչի մեղ թեվ կռունկը յերկինք բարձրացավ և գոչեց. նրան հավանեցին թռչունները և ոծեցին թագավոր: Եշ յեկավ և ասաց. «Այ, յեթե ինձ վոտի տեղ անեյիք, վոր նրա փոխարեն յես բարձրանայի: գուք կլսնյիք, թե ում ձայնն ե զորավոր»:

Յ Ե Զ Ն Յ Ե Վ Ա Հ



ԵԶՆ և ձին խոսացին
միմյանց հետ: Ձին
ասաց. «Դու մի ես,
կամ ի՞նչի պետք ես»:
Ձին ասաց. «Յես ձիյեմ
և ինձ թագավորները
և իշխանները և պա-
րոնները զարդարում
են վոսկով և արծա-
թով և բաղմում են
ինձ վրա»: Յեզն ա-
սաց. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ
յես, վորովինետե յես եմ վաստակում և չարչար-
վում ե հոգնում և ապա դու և քո թագավորն
ուտում եք: Յեզ բոլոր մարդիկ ուտում են իմ»

վաստակը և յեղե չվաստակեմ դու և քո թագա-
վորն իսկույն կմեռնեք։ Յեղ դու յերախտամոռ
մի լինիր»։

ՀԻՄԱՐ ԹԵՎԱ ԶՄԵՐՈՒԿ




Ի հիմար և միամիտ
մարդ ուներ մի դա-
հեկան և առնելով
դահեկանը գնաց
քաղաք մի եզ գնե-
լու և շրջեց քաղա-
քում և շուկայում
և չպտավ մի դահե-
կանի եզ, ապա

իլլիին յեկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ
և հիացմամբ հարցը եց. «Այս ի՞նչ եք: Յեզ վա-
ճառականներն իմացան, վոր նա հիմար և եւ ա-
սացին, թե հնդու եշի ձու. յե և կհանի հնդու
մեծ եզ: Յեզ ուրախանալով մարդը, տվեց դահե-


կանը և առավ հնդու եզի ձուն, Յեվ վաճառականները նրան պատվիրեցին, թե ձեռքիդ զգույշ տար, թե չե կկոտրվի և եզը միջից կփախչի, Յեվ ձմերուկը ձեռքին մարդն սկսեց գնալ զառիվայր ճանապարհով և նրա վոտքը սայթաքեց, ձմերուկը ձեռքից դուրս պրծավ և գլորվեց խիտ անտառի մեջ և անտառից մի նապաստակ վաղեց և սկսեց փախչել խոկ մարդը կարծեց, թե ձուն կոտրվել է և ահա եզը յելել և փախչում է, Յեվ հետևից վաղելով կանչում եր նապաստակին և ձայն եր տալիս. «Այ հնդու եզ, վայ ինձ, մի փախչիր. քուռի, քուռի խնայիր ինձ և վերադարձիր»:

ԵՐԻԿՆ ԹՈՒՌ ՇՆԱՎԵՑ



ԵՐԻԿ ավետիս տղին՝
թե ցնծաւ և ուրախ
յեղիք և մեծ ընծաւ
պարզեիք, վորովհետև
քեզ թռու ծնվեցի Յել
եշն ասաց. «Վայ ինձ
բարեկամներ, յիթե
հարյուր թռու ել ծնվի, չեն թեթեացնի ծանրու-
թյունն իմ մեջքի բնուանք։

ԱՐՔԱՏ ՅԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ



Ի աղքատ մի
գյուղ յեկալ և
մտավ գյուղի
լեկեղեցին, վոր
խարխուլ եր և
անձրեսկեղ Յել
այն աղքատը
անձրեսթաց եր
և քաղցած և հա-

զել եր պատառուուն զգեստ և զողում եր և
հոգնել եր ճանապարհից Յել ներս մտավ քա-
հանան, սկսեց ժամ ասել Առավ ավետարանը և
կարգաց այն եջը, ուր զբված եր, թե ոտարսական

եյի՝ ընդունեցիք ինձ, մերկ եյի՝ հաղցրիք ինձ՝
բաղցած եյի՝ կերակրեցիք ինձ, ծարավ եյի՝ հա-
ղեցրիք ինձ։ Այս աղքատը լսեց և ռւրախացավ.
«Այս ինձ համար և ասլած և ահա շուտով կկա-
տարեն իմ կամքը։ Իսկ քահանան ժամն արձա-
կեց և դնաց տուն և աղքատին թողեց յեկեղեցու
մեջ և հոգ չտարավ նրա մասին։ Յեզ աղքատն
ասաց, «Այս դիրն, վոր կարդաց, նա սուտ եր։
Յեզ առավ ավետարանը, վրան քար դրեց և սու-
դեց ջրի մեջ։ Յեզ քահանան յեկեղեցի գալով
ավետարանը չդրավ և աղքատին ասաց. «Ո՞ւր և
ավետարանը։ Յեզ աղքատն ասաց քահանային.
«Ի՞նչ ես անում սուտ ավետարանը, և յիս տարա-
ջուրը գցեցի։ Յեզ քահանան բարկանալով
սկսեց ծեծել աղքատին և աղքատն ասաց. «Ի՞ն-
չու յիս ծեծում ինձ, անիրավ. յեթե հավատում
ես, թե ավետարանն աստծո նշմարիտ խոսքն ե,
ապա ինչո՞ւ չես կատարում նրա կամքը։ Վորով-
հետեւ յիս ստարական եմ և ինձ չեք ընդունում,
մերկ եմ և ինձ չեք հաղցնում, քաղցած եմ և չեք
կերակրում ինձ, ծարավ եմ և ջուր չեք տալիս։
Միթե աստված այդ բաների պակասությունն
ուներ և այդ ամենն իրեն համար ասաց»։

ՀԱՅԻ ՈՒ ՎՈՐԴԻ




Ի մարդ աղջիկ
առավ վորդու
համար և վորդին
ամուսնացավ
աղջկա հետ և
յերբ միավորվեց
նրա հետ, շատ
հիացավ ամուս-
նության գործի

վրա և ուրախացավ և սկսեց հորը խրատել ա-
մուսնության գործի մասին:

Յել հայրն ասաց. «Ո՞վ վորդյակ, յես ամուս-
նության գործով ծնեցի քեզ և այժմ դժւ յես
խրատում ինձ»:

ՄԱՐԴ ՅԵՎ ԸՆԿՈՒՅԶ ՅԵՎ ԶՄԵՐՈՒԿ



Ի մարդ ընկույզի
ծառի տակ ձմերուկ
եր ցանել Յեկ
ոլուուղի ժամանակ
յնկավ, տեսավ մե-
ծամեծ ձմերուկնե-
րը և ծառին նայեց,
տեսավ, վոր ըն-
կույզը մանր եր:

Մարդն ասաց. «Տեր աստված, ի՞նչ վոր ստեղծել
ես՝ ամենը կարգին և և մի բանի նմանու իսկ
այս յերկու պառուղը անկարդ են և բանի նման
չեն»: Մարդն ասում էր, վոր ընկույզի տեղ ձմե-

բուլ պիտի լիներ ծառին և ընկույզը ձմերուկի թփի վրա։ Յեվ նա պառկեց ծառի տակ և նայեց ծառին և հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից և շատ աղինդ կպատ նրա ճակատին և ճակատը պատռեց և արյուն յիլալ։ Յեվ մարդը վեր կաշավ տեղից և աղաղակեց։ «Ճեր ասաված, ինչ վոր ստեղծել ես, ամհնը կարգին և և կատարյալ և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը թող իմից վատ լինի, վորովհետեւ յեթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ»։


ՅԵԿԵՂԵՑԻ ՅԵՎ. ԶԲԱԴԱՑ



ԵԿԵՂԵՑԻՆ պարծեցավ
յուր սրբությամբ և ա-
սաց, թե Շնու եմ տա-
ճար աստուծո և դեպի
ինձ են գալիս քահա-
նաները և ժողովուր-
դը աղոթք մատուցա-
նելու աստծուն և պա-
տարակ, և հաշտվում
և աստված աշխարհի
հետ և մեղքերին թո-
ղություն և լինում»:

Այն ժամանակ ջրազացն ասաց յեկեղեցուն, թե
«Ի՞նչ վոր դու ասում ես, արդար և և ճշմարիս,
բայց վու իմ յերախափքը մի մոռանա, վոր դիշեր
յերեկ աշխատում եմ և զատում այն ինչ վոր ու-
տում են քահանաները և ժողովուրդը և ապա քեզ
են զալիս աղոթելու և յերկրագելու աստծուն»:

Ա.ՄԵՆԱՏՏՎԵՑ ՄԱՐԴ



Ի թագավոր կամեց-
շավ աշտարակ շի-
նել և աշտարակը
քանի ցրելը շի-
նում եյին, զիւրը
փուլ էր զալիս: Յեկ
նա հակաքեց յուր
զիտուններին և
պատճառը հարց-
րեց: Նրանք ասացին. «Ցեղե կամենում ես, վոր
այլես չփլի, դու գտիր մի տղետ մարդ, վորից
ավելի տղետ մարդ չկինի և նրան կենդանի զիր
պատի մեջ և պատը թող շարեն.» և այլես չի
փլին: Յեկ թագավորն ասաց. «Այդ բանի ընտ-

բությունը յիվս դաք արեք և զտեք մի տղետ
մարդ, վորին կենապանի թաղեն պատի մեջ:

Յեթ զիտունները նստեցին միասին վորոշեալու, թէ ի՞նչ տեղ կարող են զտել տղետ մարդ և մեկն ասաց. «Զկնորսն է տղետ, քանի վոր նըս առն ու տալը մարզու հետ չի, այլ ջրի և ձկնեարիւ իսկ վոմանք տասացին. իշապանը, վոր իշու հետ և լինում է յուր վողջ կյանքն անց և կացանում գրաստի հետ, շրջելով լիու և անտառ վոմանք ծովարարին ասացին, իսկ վոմանք հովզին, վոր ամառ—ձմեռ վոչխարների հետ շրջում և լիններում, չի մանում զյուղ կամ քաղաք: Յեթ հավանություն արին և կամեցան հովչին բերմը:

Այն ժամանակ զիտուններից մի վոմն ասաց. թէ «Մեր թագավորը մի հովչի ունի, վոր ձնվել և սարում վոչխարների մեջ և սնվել և այսուղ և յուր կյանքում վոչ գլուղ և մտել, վոչ քաղաք»: Յեթ ուզարկեցին տաս ձիտվոր, վորպեսդի մարզուն բերեն: Յեթ ձիավորները գնացին զտան հովզին, վոր կթում եր վոչխարը և վողջունելով ասացին. «Թագավորը քեզ կանչում է»: Հովիվն ասաց. «Յես իմ կյանքում վոչ քաղաք եմ գնացել և վոչ զյուղ. ինձ ինչու յե կանչում»: Իսկ

Նրանք խորամանկությամբ ասացին չենք իմա-
նումք: Իսկ հովիվը պատվեց նրանց, զառ մոր-
թեց և պանիր բերեց և ուրախացրեց նրանց և
յերդմամբ հարցրեց կանչելու պատճառը: Յեվ
նրանք ասացին, թե այս պատճառով եք քեզ կան-
չում, վորովհետև թագավորի դիտուններն ասել
են, վոր մի տգետ մարդու պետք եղանել պատի
մեջ, վորպեսզի պատը շեն մնա:

Այն ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց.
«Հիմարը և տղետն այն դիտուններն են, վոր
այդպիսի ընտրություն են արել»: Յեվ մի վոչ-
խար բերելով ասաց. «Յես ձեղ ցույց կտամ իմ
տղիտությունը»: Յեվ ասաց. «Այս վոչխար յեր-
կու զառ ունի փորում, մինը եղ ե, և մյուսը՝
փորձ. մեկի գլուխը սկ ե և մյուսինը՝ սպիտակ»:
Յեվ վոչխարը մորթեց և դառները փորից հանեց
և այնպես եր; ինչպես ասաց: Յեվ մի այլ վոչ-
խար բերելով ասաց. «Այս վոչխարը մեկ զառ
ունի փորում. մարմինը սկ ե, գլուխն սպիտակ
և ինքը վորձ»: Յեվ մորթեցին, տեսան այնպես:
Յեվ հովիվն ասաց. «Վոչխարի այս յերկու հոտը,
վոր կա ձեր առաջ, ամենին գիտեմ, թե վորն ե
ծնելու և վորն ե ստերջ և վորն ե վորձ ծնելու և
վորը՝ եղ և վորը սկ կամ սպիտակ և վորը սկ ու

ապիտամկ պուտերով։ Զեր գիտունները կարսղ են
այդ իմանալու։ Զիավորներն ասացին. «Վոչ ա-
մենեին»։ Հովիվն ասաց. «Ուրեմն իմացեք, վոր
յես չեմ այն հիմարը և տղետը. վորին զուք
փնտրում եք։ Իսկ յեթե կամենաք, յես ցույց
կտամ տղետ մարդուն թագավոր թող յուր նա-
յիպին բռնի, թալանի և ինչ ունի ամենն առնի
և քաղաքի հրապարակում նրան կախի և չարա-
չար տանջի, վորպես զի բոլոր քաղաքացիները
տեսնեն, ապա նայիպին թող տանեն թագցնեն
և սաեն, թե նրան սպանեցին։ Յեվ յերեք որ
քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ վոր կդա
և հանձն կառնի նայիպի գործը, նրա ամեն ապ-
րանք այդ մարդուն կտանք և նրան կնշանա-
կենք թագավորի նայիպ։ Այն մարդը, վոր կանս-
նի այդ խաղքը և կլսի ինչ վոր արին նայիպի
զլիսին և առաջանմալով կասի, թե յես ուզում եմ
լինել նայիպ, այն մարդն և հիմար և տղետ,
նրան բանեցեք և կենդանի գրեք պատի մեջ, վոր-
պեսպի այլս պատը չփլչի և չեն մնա։

Իսկ նրանք յեկան և թագավորին պատմեցին և
թագավորն արեց այնպես, ինչպես հովիվն ասել
եր և մինչդեռ քաղաքում կանչում եյին, թե ով
դա և հանձն առնի նայիպի գործը և իշխանու-

թյունը, Նա կստանա նրա ապրանքը և հողը,
այն ժամանակ մոտ վաղեց մի ջրմի և թռնի մարդ
և ասաց, թե յես հանձն կառնեմ այդ գործը, Յեզ
նրան հարցրին, թե տեսմը ինչ արին նայիսէ
գլխին Նա ասաց. «Այս տեսա»:

Յեզ իսկույն առան նրան և տարան, կենդաւ
նի դրին պատի մեջ և պատը հաստատուն մնաց:

ԱՐԱՐՈՒՄ ՅԵՎ ՎԱՐՄԱՐՈՒՄ:



ԱՐԱՐՈՒՄԻՆ չներով տառ
առապում և նեղում եր
աղվեսին: Ցել աղվեսը
զարձով և տառց. «Ա-
ղաջում իմ քեզ, տառ
թե ինչու համար ես
ինձ նեղումն»: Ցել
վորսորդն տառց. «Դոբ-
ոկիս զի
հանեմ քո
մորթին»:
Աղվեսը

կանգնեց և տառց. «Տեր տառլոծ, վառք քեզ,
վոր սրա ուղածն այս և իսկ յիս կարծում եյի,
թե ինձ ուղում և նշանակել մեր գալառի հառ
վարոծ կամ թաշնոցի վանահայր»:

ԻՇԽԱՆԱՎՈՐ ՅԵՒ, ԻՄԱՍՏՈՒՆ



ԱՅ մի աշխարհակալ իշխանավոր և նա ուներ
մի խիստ գեղեցիկ ազա:
Յեվ իշխանավորն ասաց,
թե գեղեցիկ աղջիկ կառանեմ, վոր կին լինի իմ
վորդուն և ունենամ գեղեցիկ թուաներ՝ ժառանդ
իմ զահի: Յեվ զնաց լինեց մի գեղեցիկ հարս և
զեռ թռո չեր ունեցել
յերբ վորդին մեռալ և հարսը մնաց: Յեվ ինքը
կամեցալ հարսին առնել և հարցը լիմաստունեներին, թե ոկամ իրավունք և նրանք ասացին, թե
չկա իրավունք, վոր հայրն առնի հարսին: Յեվ
նա չկամեցալ լսել նրանց և գտալ մի այլ ի-

մաստուն; զոր նրա սիրելին եր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուն յերկու աղջ կա և նրանցից վոչ մեկին չի հասնում որդյ բայց քեզ կհասնի»։ Յեկիշխանավորին ասաց, թե «Ի՞նչու աշխարհի յոթանասուն յերկու աղջին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»։ Յեկի իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել; վորովհետեւ կսպանեմ ինձ»։ Յեկին յերդից չպատժել նրան, յեթե պատճառն ասի»։

Այս ժամանակ իմաստունն ասաց. «Վորովհետեւ ամեն գու ամեն աղջից զուրս ես և քո վրա չկայիշխանություն և ինչ կամենաս կարող ես անել»։

մաստուն, վոր նըա սիրելին եր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յութանառուն յերկու աղջ կա և նըանցից վոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»։ Յեկիշխանավորին ասաց, թե «Ինչու աշխարհի յոթանառուն յերկու աղջին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»։ Յեկիմաստունն ասաց, «Վախենում եմ որատճառն ասել, վորովհետեւ կսպանես ինձ»։ Յեկինս յերդից չպատժել նըան, յեթե պատճառն ասիւ

Այս ժամանակ իմաստունն ասաց, «Վորովհետեւ գու ամեն աղջից գուրս ես և քո վրա չկախիշխանություն ե ինչ կտմենաս կարող ես անել»։

Ա.ՂՎԵՍ ՅԵԼ ԹՂԹԱՏՈՐ ԴԱՅԼ



ՂՎԵՍԸ մի գրած
թուղթ գտավ և
տարավ գայլին
և ասաց. «Այս
չափ ժամանակ
աշխատեցի և
բարեխռոս մար-
դիկ մեջ դցեցի
և իշխանից քեզ

Համար թուղթ հանեցի, վոր ամեն գյուղ՝ ուր
հանդիպես, քեզ պիտի տա մի վոչխար: Յել վոչ
շուն և վոչ մարդ քեզ չպիտի նեղենց: Յեվ այդ-
պես խարեց գայլին և միասին գնացին մի գյուղ
և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը ավեց

զայլինու Յերբ գայլը գյուղի մեջ մտավ, վըս
թափսեցին չները և մարդիկ և նրան զղեցին և
զանահարեցինու Յեվ արյունաթաթախ գայլը հա-
ղիվ ազատվելով հասավ աղվեսինու Յեվ աղվեսն
ասաց. «Ի՞նչ թուղթը ցույց չտվիր»:


Յեվ դայլն ասաց. «Յուրաց տվիւ բայց գյուղում
հազար շուն կար, վոր զիր չդիտեր»:

ԱՅՐԻ ԿԻՆ ՅԵՎ. ԽՈՐԹ ՎԱՐԴԻ



Ե այրի կին ու-
ներ մի կով և
նըա խորթ վոր-
դին ուներ մի եղ
Յեվ խորթ վոր-
դին գողանում
եր կովի կերը
տալիս եցին Յեվ
Ե այրի կինն աստ-

ծուն աղաչեց, վոր աստված եշին մեռցնի: Բայց
կովը մեռավ և այրին լաց եղավ և ասաց. «Ո՞վ
աստված, միթե չկարողացար եշը կովից տար-
րերել»:



Ե յերիտասարդ
ուխտել եր հա-
րամ բան ամե-
նեին չուտել և
մի որ նա գնաց
գետի յեղը և
տեսավ։ Վոր ջու-
րը մի խնձոր եր
ըերում։ Յերի-

տասարդն առավ և խնձորը կերավ անոթի, ապա
միան ընկազ իր ուխտը և խղճմտանքով գնաց
դեմն ի վեր, գտավ մի այգի և իմացավ, վոր
խնձորն այդ այգուց եր։ Յերիտասարդն ասաց
այգետիրոջ. «Նողորմիր ինձ և առ խնձորի գինը

կամ հալալ արա, վորովհետև յես հարամ բան
ամենեին չեմ կերելք: Յեվ բուրաստանի տերն
ասաց. «Կեսը, վոր իմն ե, հալալ քեզ և կեսը՝ իմ
յեղբորն ե, նրան տեր չեմ: Յեվ իմ յեղբայրը
հեռու յե այստեղից վեց որվա ճանապարհ»: Յեվ
յերիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն
մարդուն, ասաց. «Կամ առ քո կես խնձորի զի-
նը և կամ հալալ արա ինձ»: Յեվ մարդն ասաց.
«Վոչ գինը կառնեմ և վոչ հալալ կանեմ: Թե
կուզես, վոր հալալ անեմ, յես մի աղջիկ ունեմ»
վոր վոչ ականչ ունի և վոչ լեզու և վոչ ձեռք
և վոչ վոտք, նրան քեզ կին առ, վոր հալալ տ-
նեմ»:

Յերիտասարդն անճարացած առավ այդ աղ-
ջըկան և յերբ սռագաստ մտան, տեսավ վոր
աղջիկը ամենեին առողջ եր: Յեվ յերիտասարդն
աներոջն ասաց, թե ինչու եյիր ծաղրում քո
աղջկան: Յեվ նա ասաց. «Յես ճշմարիտ եյի, վո-
րովհետև ծնված որից իմ աղջիկ արեղակի լույսը
յերդից և տեսել և ոտար մարդու ձայն չի լսել
և ոտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շո-
շափել և վոտքը դռնից դուրս չի դրել Յեվ յես
քեզ նման հալալ մարդ եյի ուղում և ահա դու
յեկար»:

ԱՌԵՇԻՆ ՅԵՎ. ՄԱՐԴ



Ի դորավոր առյօւծ
նստել եք ճանա-
պարհին և տեսակ
տեսակ դադաններ
այդ ճանապարհով
գալիս եյին դոդո-
լով և անցնում:
Առյօւծը հարցրեց
նրանց. «Ինչմեր յեք


փախչում և մեմ ահից եք զարհուրած փախչում»:
Յեվ նրանք ասացին. «Փախինք և դու, վորովհե-
տե ահա գալիս և մարդը»: Յեվ առյօւծն ասաց.
«Ո՞վ և մարդը և բնչ և նա և բնչ և նրա ուժը և
նրա կերպարանքը, վոր փախչում եք նրանից»:

Յեկ նրանք ասացին. «Կդա, կտեսնի քեզ և քեզ
վայ կլինի»:

Յեկ ահա յուր հանդից յեկավ մի հողագործ
մարդ Յեկ առյուծն ասաց. «Միթե դու յես այն
մարդը, վոր փախցնում և գաղաճներին»: Յեկ
նա ասաց. «Այս, յես եմ»: Առյուծն ասաց. «Արի
կռվենք»: Մարդն ասաց. «Այս, ըայց. քո զենքե-
րը քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են: Յեկ նախ
կապեմ քեզ, վորպեսդի չփախչես, մինչև յես
գնամ առնեմ իմ զենքը և ապա կռվենք»: Առ-
յուծն ասաց. «Յերդվիր, կդաս և յես կլսեմ քեղ»:
Մարդը յերդվեց և առյուծն ասաց. «Հիմա կա-
պիր ինձ և գնա շուտ ու դարձիր»: Մարդը հա-
նեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց
կաղնու ծառին և ծառից կտրեց մի բիր և սկսեց
դարկել առյուծին:

Յեկ առյուծը զոչեց. «Յեթե դու մարդ ես, ա-
վելի խիստ և անխնա զարկիր իմ կողերին, վո-
րովհետեւ այս խելքին այդպես և վայել»:

ՄՈՒԿԻՆ ՅԵՎ. ԱԼԻ. Տ




Ե մուկ հզարտաց
յալ, կորավ նրա
իմտառությունը և
նրա սիրտը լցվեց
հպարտությամբ:
Մուկը գնաց ուղար-
մատ և ասաց ուղ-
տին. «Ինձ հրաման

առու քո կճղակի մեջ բռւն դնեմ և այնտեղ
բնակվիմք: Ցեվ ուղան ասաց. «Քեզ մնաս կլինի,
վորովինեան հանկարծ կոխ կատամ քեզ և կմեռնեաւ:
Մուկն ասաց. «Քո սմբակը կակուդ և և ինձ մնաս
չի լինիր: Ուղան ասաց. «Քո արյունը քո գլու-

իսը»։ Յեկ մուկը ուղարի կճղակի մեջ շինեց իբ բունը։ Մի անգամ ուղար ծանր բեռան տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց մուկին։ Յեկ մուկը ճշաց և նրա փորից գուրս յեկավ ճրադուն, վորովհետեւ մուկը գեր եր։

